ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ “ԳԵՂԱՐՎԵՍՏ” ՀԱՆԴԵՍԻ ԷՋԵՐՈՒՄ *

ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանալի բառեր՝ “Գեղարվեստ” հանդես, Գարեգին Լևոնյան, գեղարվեստական կրթություն, դպրոց-մշակույթ կապ, դպրոցական կրթություն, էսթետիկական ընկալում:

1908 թ. Թիֆլիսում լույս տեսավ “Գեղարվեստ” գրական, գեղարվեստական, երաժշտական պատկերազարդ հանդեսի առաջին համարը: Հանդեսի հիմնադիր-խմբագիրն էր գրականագետ, արվեստաբան Գարեգին Լևոնյանը[1]: Խմբագրական ուղերձից պարզ է դառնում, որ հիմնադիրը, ավելի քան որևէ մեկը, գիտակցում էր պատմական այդ ժամանակաշրջանում գեղարվեստական պարբերական մամուլի առջև ծառացած խոչընդոտները, սակայն, միևնույն ժամանակ, լավատեսությամբ էր տրամադրված՝ համակված ցանկացած գործի նախաձեռնողին բնորոշ “երազողի” ոգեշնչությամբ: “Երկա՞ր պէտք է ապրի “Գեղարուեստը”: – Այդ հարցին թերահաւատութեամբ են վերաբերւում շատերը, աչքի առաջ ունենալով Կովկասահայ ժողովրդի ներկայ դրութիւնը և առհասարակ նրա վերաբերմունքը դէպի գրականութիւնն ու գեղարուեստը: Այո՛, իրաւ որ նոյն այդ ժողովուրդը իրենց բնի մէջ մեռցրել է մեր հանդէսից առաջ դուրս եկած մի շարք գեղարուեստական պարբերականներ, … բայց նոյն այդ ժողովրդի մէջ մենք նկատում ենք այժմ սէր դէպի ինքնազարգացումը, թատրոնը, դասախօսութիւնները, գեղեցիկ հրատարակութիւնները, ընթերցանութեան նիւթ մատակարարող հանդէսները: Մեր հասարակութեան, մեր երիտասարդական շրջանների այդ արթնացումը մի կողմից, որ գրաւական է մեզ “Գեղարուեստի” տարածումի համար, մի խումբ կարող ոյժերի աջակցութեան ծրագրները միւս կողմից, մեզ համարձակութիւն են տալիս ասելու, որ “Գեղարուեստը” պէտք է ապրի և ապրելով հանդերձ հետզհետէ առաջադիմէ,– գրված է ընթերցողներին ուղղված ուղերձում: –

---

* *Ներկայացվել է 03. IV. 2020 թ., գրախոսվել է 10. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 10. IV. 2020 թ.:*

[1] *Գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդեսի հրատարակման հնարավորությունը Գ. Լևոնյանն ու Կոմիտասը քննարկում էին դեռևս 1905 թ. Էջմիածնում, սակայն այդ ժամանակ գաղափարն իրականացնել չհաջողվեց. տե՛ս Գ. Լ ևոնյան. Երկեր, Երևան, 1963, էջ 7:*

Մենք գեղարուեստի սիրու համար դնում ենք այստեղ մեր բոլոր ոյժերը, նիւթական, բարոյական, ֆիզիքական, մեր 12-ժամեայ օրական աշխատանքը, յուսալով որ հայ հասարակութիւնն էլ չի խնայիլ իւր սիրալիր ուշադրութիւնը”[2]:

Նախատեսվում էր, որ հանդեսն ունենալու է տարեկան տասը համար, յուրաքանչյուրը՝ հստակ ծրագրով: Այսպես, “Գեղարվեստի տեսականը” բաժնում անդրադարձ էր կատարվելու էսթետիկական հարցերին, ինչպես նաև գրականության ու արվեստի առանձին ճյուղերի՝ բանաստեղծության, երաժշտության, նկարչության, քանդակագործության, ճարտարապետության տեսական հարցերին: “Գեղարվեստի պատմականը” բաժինը ներկայացնելու էր պատմական ակնարկներ ոչ միայն հայ ժողովրդի, հարևան ազգերի և Արևմուտքի մշակույթից, այլև նշանավոր արվեստագետների կյանքն ու գործունեությունը: “Գեղարվեստի գրականը” նպատակ ուներ հարթակ ծառայել ժամանակակից գրողների համար, միաժամանակ էջեր տրամադրել թարգմանական երկերին: “Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում” խորագրի տակ տպագրվելու էին արվեստի կրթությանը վերաբերող հոդվածները: “Մատենախոսական-քննական” բաժնում տեղ պետք է գտնեին գրախոսականներ թե՛ գեղարվեստական երկերի, թե՛ թատերական բեմադրությունների, թե՛ ցուցահանդեսների մասին: “Գեղարվեստական նամականին” հայ, ռուս և արտասահմանյան մշակութային կյանքի հայելին էր լինելու: “Երաժշտական երկասիրություններն” ընդգրկելու էին եկեղեցական ու աշխարհիկ երաժշտությունը, ժողովրդական երգերն ու պարերանակները: “Պատկերահանդես”-ը ընթերցողին էր ներկայացնելու նշանավոր արվեստագետների ստեղծագործությունների վերատպություններ, ինչպես նաև օրիգինալ նկարներ ու զարդանկարներ: Առանձին բաժիններով ներկայացվելու էին խմբագրության ստացած նամակներն ու արվեստին և գրականությանը վերաբերվող հայտարարությունները[3]:

“Գեղարվեստ”-ի հրատարակվելը ողջունեցին մշակույթի մի շարք գործիչներ, ինչն արձանագրված է հանդեսի առաջին[4] և երկրորդ[5] համարներում: Այնուհանդերձ, Գ. Լևոնյանի այս համարձակ նախաձեռնությունը սկզբնական պատկերացումից տարբեր ընթացք ունեցավ: Հանդեսը հրատարակվեց մինչև 1921 թ., սակայն նախա-

---

[2] Գ. Լ ե ւ ո ն ե ա ն. Մեր ընթերցողներին.– “Գեղարուստ” (Թիֆլիս), 1908, № 1, էջ 109:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 112:

[4] Տե՛ս Խրախոյս, քաջալերութիւն, բարեմաղթութիւն “Գեղարուեստի” հրատարակութեան առթիւ.– Նույն տեղում, հավելված:

[5] Տե՛ս “Գեղարուեստ” հանդէսը մամուլի դատաստանի առաջ. – “Գեղարուեստ”, 1908, № 2, հավելված:

տեսված տարեկան 10 համարի փոխարեն իր ողջ պատմության ընթացքում լույս տեսավ միայն յոթը[6]:

Գեղարվեստական կրթության հարցերին նվիրված նյութերը տպագրվել են հանդեսի "Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում" բաժնում: Դրան հանդիպում ենք "Գեղարվեստ"-ի յոթ համարներից հինգում՝ 1908-ի՝ երկու, 1909, 1911 և 1913 թվականների հանդեսների համարներում: Պարբերականում նման խորագրի ներառումն արդեն իսկ հուշում է, թե որքան էր կարևորում Գ. Լևոնյանը գեղարվեստական կրթության դերը մշակութային դիմագիծ ունեցող հասարակության կրթման գործում: Շարքի առաջին հոդվածը 1908-ի անդրանիկ համարում հենց Լևոնյանի գրչին է պատկանում: "Գեղարուեստական առարկաների դասաւանդութիւնը մեր դպրոցներում" վերտառությամբ այս հոդվածում հեղինակը մատնանշում է գեղարվեստական կրթության կարևորությունը՝ Արևմուտքի փորձն օրինակ ծառայեցնելով. "Ամենքիս յայտնի է, որ բոլոր առաջաւոր ազգերի էլեմենտար, ժողովրդական թէ հանրակրթական միջնակարգ դպրոցներում մտցուած են, որպէս պարտադիր առարկաներ, գեղարուեստներից երկուսի՝ երաժշտութեան (երգի) և նկարչութեան դասատուութիւնը: Այդ երկու առարկաներն են, որ զարգացնելու են մատաղ հասակի լսողութիւնն ու տեսողութիւնը, զարգացնելու են յիշողութիւնը, գեղեցիկի ճաշակը, ազնուացնելու են նրա հոգին և բարքը"[7]: Այնուհետև հոդվածագիրն անդրադառնում է այն հիմնախնդիրներին, որոնք առկա էին հայկական դպրոցներում՝ առարկայի ծավալի հստակեցման հարցը, արվեստի առարկաների "երկրորդական" համարվելու իրողությունը, մասնագիտական պատրաստվածություն ունեցող ուսուցիչների սակավության խնդիրը[8]: Ակնհայտ է դառնում, որ այս խորագրի ներքո տպագրվող հոդվածաշարով Գ. Լևոնյանը ոչ միայն բարձրաձայնում էր գեղարվեստական կրթության ասպարեզում առկա խնդիրները, այլև նպատակ էր հետապնդում գոնե տեսական առումով որոշ բացեր լրացնել:

"Գեղարվեստ"-ի՝ 1908 թ. երկրորդ համարի խնդրո առարկա բաժինը բաղկացած է երկու հոդվածից: "Գեղարուեստական մանկավարժութիւնը Եվրոպայում" հոդվածում հանդեսի խմբագիրը հիմնվում է ֆրանսիացի մանկավարժ Մարսել Բրաունշվիգի "Գեղարվեստը և երեխան"[9] աշխատության վրա: Թռուցիկ ներկայացնելով Եվրոպայում

---

[6] "Գեղարվեստ" հանդեսի մասին մանրամասն տե՛ս Թ. Գ ա լ ս տ յ ա ն. Գարեգին Լևոնյանը և "Գեղարվեստ" հանդեսը, Երևան, 1979: Գրքում սույն հոդվածի թեմային առնչվող անդրադարձը հպանցիկ է:

[7] "Գեղարուեստ", 1908, № 1, էջ 69:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 69–70:

[9] Աշխատության ամբողջական վերնագիրն է՝ "Արվեստը և երեխան. ակնարկ գեղագիտական կրթության մասին". տե՛ս M. B r a u n s h v i g. L'art et l'enfant: essai sur l'education esthntique, Toulouse. Paris, 1907.

գեղարվեստական կրթության վիճակն ու զարգացման միտումները՝ Գ. Լևոնյանն ընդգծում է, որ երեխայի գեղագիտական հայացքների ձևավորման ու զարգացման հարցում դպրոցին զուգահեռ մեծ դեր ունի կատարելու նաև ընտանիքը: Վերջինս "…մեր երկրում, յայտնի է որ, շատ քիչ բացառութեամբ ինքը յետ է ու անպատրաստ այդ տեսակէտից: Առաւելապէս մեր հայ կեանքը, մեր ընտանիքն ու դպրոցը ընդհանրապէս՝ այնքան յետ են մնացել գեղարուեստի հասկացողութիւնից, որ մեծ պարտականութիւն կայ իւրաքանչիւր ուսուցչի և ինտելիգենտ ծնողի վրայ, օր առաջ հոգալ այդ մեծ պակասը լրացնելու, այն չափով, որքան կը ներեն տեղական հանգամանքները"[10],– գրում է հոդվածագիրը: Հատկապես գնահատելի է հոդվածի վերջնամասում տեղ գտած խմբագրական խոսքը, որով հանդեսի խմբագրությունը հանձն է առնում "Փոստարկղ" ենթաբաժնում կամ նամակներով պատասխանել բոլոր նրանց, ովքեր կցանկանան իմանալ՝ "ա. Ի՞նչպիսի պատկերներով պէտք է զարդարել դասարանները և որտեղի՞ց կարելի է ստանալ դրանք: բ. Ի՞նչ գրքեր և հանդէսներ կարող են կարդալ ուսուցիչները և ծնողները իրենց գեղարուեստական ինքնակրթութեան պակասը լրացնելու համար"[11]: Նման նախաձեռնությունը հավաստում է, որ Գ. Լևոնյանի ոչ միայն տեսական հոդվածներով, այլ գործնական քայլերով էր ցանկանում նպաստել հայկական դպրոցներում գեղարվեստական կրթության զարգացմանը:

Գ. Լևոնյանի հոդվածին հաջորդում է ֆրանսիացի կոմպոզիտոր, կոնսերվատորիայի հարմանիոյի դասախոս, Փարիզի համայնքային դպրոցների երգի ծրագրի գլխավոր պատասխանատու, պրոֆեսոր Օգյուստ Շափյուի "Երաժշտական արուեստը դպրոցում" վերնագրով նյութը[12], որը նույն՝ 1908 թ. լույս էր տեսել Փարիզում հրատարակված "Արվեստը դպրոցում" գրքում[13]: Դրանում զետեղված հոդվածները վերաբերում էին դպրոցում արվեստի ուսուցման մի շարք հիմնահարցերի: Ի դեպ, գիրքը տպագրվել էր Ֆրանսիայի նախագահի բարձր հովանու ներքո 1907 թ. հիմնադրված նույնանուն՝ "Արվեստը դպրոցում" ազգային ընկերության ջանքերով:

"Գեղարվեստ"-ի 1909 թ. երրորդ համարի համապատասխան բաժնում տեղ է գտել Հովհաննես Ակունյանի "Գեղարուեստական եւ պրոֆեսիոնալ զարգացումը" վերնագրով հոդվածը[14], որտեղ խիստ կարևորվում է տարրական դպրոցներում որպես պարտադիր բաղադրիչ գեղարվեստական կրթության ներդրումը: "Մեր տարրական դպրոցի ծրագրի անկատարութիւնն ու անբաւարարութիւնը ես համարում եմ գեղարուեստական դաստիարակութեան հետևանք: Գեղարուեստական դաստիարակութեան

---

[10] *"Գեղարուեստ", 1908, № 2, էջ 81:*

[11] *Նույն տեղում:*

[12] *Նույն տեղում, էջ 82–87:*

[13] A. Chapuis. L'Art musical à l'école.– L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz-Jourdain. Paris, 1908, pp. 109–112.

[14] *"Գեղարուեստ", 1909, № 3, էջ 106–110:*

կամ զարգացում ասելով՝ ես հասկանում եմ ճաշակի զարգացում, մեր շրջապատի գեղեցիկն ու շքեղը տեսնելու ընդունակութիւն. ընդունակութիւն ներդաշնակն անները դաշնակից, կանոնաւորութիւնը քաոսից տարբերելու, ընդունակութիւն զանազանելու բնորոշն ու գլխաւորը երկրորդականից կամ պատահականից, և ընդունակութիւն իր մտքերն արտայայտելու այս կամ այն գեղարուեստական ձեւով, ստեղծելով դրա հետ թէկուզ մի աննշան ինքնուրոյն և գեղեցիկ բան"[15],– ընդգծում է հոդվածագիրը: Հ. Ակունյանն առանձնացնում է հիմնականում նկարչության, կաղապարային մոդելավորման և փայտարվեստի նշանակությունը՝ դրանց միջոցով նաև այլ առարկաների դասավանդման նոր մեթոդիկայի խթանման տարբերակ տեսնելով: Հոդվածագիրը նշում է, որ ինքնուրույն որևէ իր պատրաստելը մեծապես կնպաստի երեխայի գիտակցության մեջ մարդկային ձեռակերտ աշխատանքի նկատմամբ հարգանքի ձևավորմանը, ինչն էլ կհանգեցնի կրթված և գիտակից քաղաքացու կերտմանը: Միաժամանակ հեղինակն այն կարծիքին է, որ գեղարվեստական կրթությունը պետք է ներառվի տարրական դպրոցում, քանի որ "եթէ ձեռքի և աչքի կրթելը, դիտողութեան ընդունակութիւնը, ինչպէս և իր մտքերը գեղարուեստական ձևերով արտայայտելու ընդունակութիւնը չեն զարգացել իր ժամանակին, այսինքն ամենավաղ տարիներից, այլևս հնարաւորութիւն չկայ վերադարձնել կորցրածը"[16]: Անդրադառնալով ԱՄՆ-ի ու Եվրոպայի դպրոցների փորձին՝ Ակունյանը դրանցից խելամտորեն օգտվելու կոչ է անում: Հոդվածն ավարտվում է այն եզրահանգմամբ, որ գեղարվեստական դաստիարակությունը "ինչպէս մտաւոր, այնպէս էլ բարոյական կրթութեան հիմք" է, և դրա զարգացումը պետք է սկսել ամենավաղ հասակից. հետևաբար, այն անհրաժեշտ է ներառել մանկապարտեզի ու տարրական դպրոցի ծրագրերում՝ կապ ապահովելով մյուս առարկաների հետ, ինչն էլ հնարավորություն կտա ուսման հետագա տարիներին ցանկալի արդյունքի հասնել:

"Գեղարվեստ"-ի չորրորդ՝ 1911 թ. համարում խնդրո առարկա բաժնում զետեղված է մանկավարժ, հրապարակախոս Արտաշես Տիրացյանի "Էսթետիկական կրթութիւնը մանկավարժութեան մէջ" վերնագրով հոդվածը[17]: Դրա առաջին մասում հեղինակն անդրադարձ է կատարում գեղագիտական կրթության պատմությանը, ապա՝ հոգեբանական տեսակետից հիմնավորում գեղարվեստական կրթության կարևորությունը դպրոցում: "Դպրոցում՝ մտաւոր կրթութեան վրայ թափուած աշխատանքը միայն այն ժամանակ է իր նպատակին հասած համարուում, երբ կարելիութիւն է տալիս աշակերտին՝ իր բոլոր իմացութիւնները բերելու մի ընդհանուր, կանոնաւոր սիստեմի. երբ սովորեցնում է աշակերտին՝ մասնաւոր երևոյթների մէջ ընմբռնելու ընդհանուր բնաւորիչ և ուժեղ գծերը և ընդունելու մասնաւորը, իբրև օրինակ ընդհանուր պատկերացումների համար,– ընդգծում է հոդվածագիրը:– Այս նպատակին, անշուշտ, մեծապէս կը

[15] *Նույն տեղում, էջ 106:*

[16] *Նույն տեղում, էջ 108:*

[17] *"Գեղարուեստ", 1911, № 4, էջ 123–128:*

նպաստի գեղարուեստական արտաղրութիւնների ուղիղ ուսումնասիրութիւնը և ճիշտ ըմբռնողութիւնը, որովհետև դրանց մէջ դրւում են մասնակի օրինակների իրենց ուժեղ և բնորոշիչ կողմերով"[18]:

1913 թ. "Գեղարվեստ"-ի հինգերորդ համարում, որը տպագրվել է Վենետիկում, թարգմանաբար տեղ է գտել Ֆրանսիայի Դեկորատիվ արվեստի ազգային դպրոցի պրոֆեսոր Գաստոն Քենիուի "Նկարչութիւնը դպրոցում եւ ճաշակի դաստիարակութիւնը"[19] վերնագրով հոդվածը, որը ևս տպագրվել է 1908 թ. Փարիզում հրատարակված "Արվեստը դպրոցում" գրքում[20]:

"Գեղարվեստ"-ի վերջին երկու համարներում՝ 6-ում և 7-ում, խնդրո առարկա թեմային առնչող հոդվածներ չկան:

Ամփոփենք. "Գեղարվեստ" հանդեսի "Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում" բաժինն առանձնանում է, թե՛ զաղափարական առումով, թե՛ հոդվածների արդիականությամբ ու բարձրացվող խնդիրների կարևորությամբ: Հիրավի, չնայած տպագրվել է "Գեղարվեստ"-ի ընդամենը յոթ համար, "բայց իր որակով ու նշանակությամբ խոշոր դեր է խաղում հայ մշակութային կյանքում, մեծ զարկ է տալիս հայ գեղագիտական մտքի զարգացմանը, արվեստի, գրականության և առհասարակ գեղեցիկի պրոպագանդմանը"[21]:

Մանե Մկրտչյան – արվ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ XX դարի հայ մշակույթ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 20 հոդվածի:
mane.mkrtchyan@gmail.com

REFERENCES

Braunshvig M. L'art et l'enfant: essai sur l'education esthétique, Toulouse. Paris, 1907.

Chapuis A. L'Art musical à l'école. – L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz-Jourdain. Paris, 1908.

Galstyan T. Garegin Levonyan ev "Gegharvest" handese, Yerevan, 1979 (In Armenian).

"Gegharvest" (Tiflis), 1908, № 1, 2; 1909, № 3; 1911, № 4; 1913, № 5 (Venetik) (In Armenian).

Harutyunyan S. Garegin Levonyan.– ՊԲՀ, 1970, № 3 (In Armenian).

[18] *Նույն տեղում, էջ 127:*

[19] *"Գեղարվեստ" (Վենետիկ), 1913, № 5, էջ 133–137:*

[20] G. Quénioux. Le Dessin a l'école et l'Éducation du goût. – L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz-Jourdain, pp. 89–108.

[21] *Ս. Հարությունյան. Գարեգին Լևոնյան.– ՊԲՀ, 1970, № 3, էջ 229–230:*

Levonyan G. Erker, Yerevan, 1963 (In Armenian).
Quénioux G. Le Dessin a l'école et l'Éducation du gout.– L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz-Jourdain. Paris, 1908.

ВОПРОСЫ ХУДОЖЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «ГЕГАРВЕСТ»

МАНЭ МКРТЧЯН

Р е з ю м е

Ключевые слова – журнал «Гегарвест», Гарегин Левонян, художественное образование, связь школа – культура , школьное образование, эстетическое восприятие.

В 1908 году в Тифлисе был издан первый номер литературного, художественного и музыкального иллюстрированного журнала «Гегарвест». Основателем и главным редактором журнала был литературовед и искусствовед Гарегин Левонян (1872–1947). Журнал должен был иметь 10 выпусков в год и состоять из определенных разделов. «Теория Гегарвеста» – так назывался раздел, посвященный эстетическим вопросам и теоретическим проблемам литературы и искусства. Раздел «История Гегарвеста» включал обзоры как армянской, так и зарубежной истории и культуры. Раздел «Литература Гегарвеста» служил платформой для современных писателей и переводческих работ. Раздел «Критики и аналитики» должен был включать обзоры произведений искусства, театральных постановок и выставок. «Письма Гегарвеста» рассказывали новости об армянской, русской и зарубежной культурной жизни. «Музыкальные обзоры» были посвящены церковной и светской музыке, народным песням и танцам. «Иллюстрации» представляли читателю произведения известных художников, а также оригинальные картины и орнаменты. Отдельные разделы включали редакционные письма и объявления по искусству и литературе.

Раздел «Гегарвест в семье и в школе» свидетельствовал о том, насколько высоко Г. Левонян ценил роль художественного образования в воспитании подрастающего поколения. В раздел вошли статьи как армянских ученых, так и европейских экспертов. Поднятые вопросы и предложенные методы были современными, изучался также западный опыт для правильной организации художественного образования в школе. Г. Левонян стремился на страницах журнала представить публике все лучшее из изобразительного искусства, литературы и теории искусства. Несмотря на то, что изначальная идея Левоняна реализовалась далеко не полностью, и за всю историю «Гегарвест»-а (1908–1921) вышло в свет всего лишь семь номеров, журнал, действительно, оставил значимый след в армянской культурной жизни и развитии эстетической мысли.

Манэ Мкртчян – к. иск., старший научный сотрудник отдела искусства армянской диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: армянская культура XX века. Автор 1 монографии и около 20 статей. mane.mkrtchyan@gmail.com

PROBLEMS OF ART EDUCATION ON THE PAGES OF JOURNAL "GEGHARVEST"

MANE MKRTCHYAN

S u m m a r y

Key words: Journal "Gegharvest", Garegin Levonyan, art education, connection between school and culture, school education, aesthetic perception.

In 1908, the first issue of "Gegharvest" – the literary, artistic and musical illustrated journal was published in Tiflis. The founder and editor-in-chief of the journal was literary and art critic Garegin Levonyan (1872–1947). The journal was supposed to have 10 issues per year and consist of certain sections. "Gegharvest's Theory" was called the section devoted to aesthetic issues and theoretical problems of literature and art. The "Gegharvest's History" section included reviews of both Armenian and foreign history and culture. The "Gegharvest's Literature" section served as a platform for contemporary writers and translations. The "Critics and Analytics" section was supposed to include reviews of works of art, theatrical productions and exhibitions. "Gegharvest's Letters" introduced news about Armenian, Russian and foreign cultural life. "Musical Reviews" revealed church and secular music, folk songs and dances. "Illustrations" presented to the reader the works of famous artists, as well as original paintings and ornaments. Separate sections included editorials and announcements about art and literature.

The "Gegharvest in the family and at school" section testified how strongly Garegin Levonyan appreciated the role of art education in the upbringing of the younger generation. The section included articles by both Armenian scholars and European experts. The issues raised and the methods suggested were up-to-date, and the Western experience was also studied for the proper organization of art education at school. On the pages of the journal G. Levonyan strove to present to the public all the best of fine arts, literature and the theory of art. Even though Levonyan's original idea was never fully realized, and in the entire history of "Gegharvest" (1908–1921) only seven issues were published, the journal really left a significant mark on Armenian cultural life and the development of aesthetic mind.

Mane Mkrtchyan – Candidate of Scineces in Arts, Senior Researcher at the Department of Art of Armenian Diaspora and International Relations of the NAS RA Institute of Arts. Scientific interest: Armenian culture of the 20th century. Author of 1 monograph and over 20 articles. mane.mkrtchyan@gmail.com